

## ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՎԱՐՔԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայ միջնադարի մեծ բանաստեղծի՝ Գրիգոր Նարեկացու կեանքի մանրամասները մնում են անյայտութեան մէջ: Գրողի անցած ուղու միակ վաւերական վկաները նրա թողած չորս փոքրիկ յիշատակարաններն են, որոնցից մէկը գրուած է իր հօր՝ Անձեւացեաց Խոսրով եպիսկոպոսի «Բացայայտութիւն կարգաց եկեղեցւոյ» եւ «Մեկնութիւն աղօթից սրբոյ պատարագին» աշխատութիւնների համար, իսկ միւս երեքը՝ իր իսկ երկերի՝ Երգ երգոցի մեկնութեան, Սպարանից Ս. Խաչի պատմութեան ու նրան կից Խաչի եւ Աստուածածնի ներքողների եւ, վերջապէս, Ողբերգութեան մատեանի համար: Կենսագրական որոշակի արժէք է ներկայացնում նաեւ Կճաւայ վանքի վանահօրն ուղղուած նրա թուղթը, որ մտել է «Գիրք թղթոց» ժողովածուն<sup>1</sup>: Իրանք կարեւոր տեղեկութիւններ են տալիս Նարեկայ վանքի մեծ ճգնաւորի առնչութիւնների ու ազգակցական կապերի, նրա այս կամ այն երկի ստեղծման ժամանակի ու շարժառիթների մասին եւ պարունակում են ժամանակագրական մի քանի այնպիսի տուեալներ, որոնցով հնարաւոր է դառնում որոշել առհասարակ նրա ստեղծագործական կեանքի տեւողութեան մօտաւոր սահմանները: Եւ միայն այդքանը: Իրականում մեծ մտածողի, անհանգիստ որոնողի ու հանճարեղ բանաստեղծի կեանքի հանգամանքները ծածկուած են անյայտութեան քողով, եւ մենք այսօր ունենք ընդամէնը նրա հոգու պատմութիւնը:

Նարեկացու կեանքի մայրամուտը գրեթէ գուժադիպեց Վասպուրականի Արծրունեաց թագաւորութեան անկմանը: Ըստ ուշ ժամանակի գրաւոր աւանդութեան նա մահացել է 1003 թ., որից ընդամէնը մէկեկէս տասնամեակ անց Վասպուրականի հայոց վերջին գահակալը՝ Սենեքերիմ Արծրունին, իր երկիրը յանձնեց Բիւզանդական կայսրութեան եւ, փոխարէն ստանալով Սեբաստիան՝ շրջակայ գաւառներով, 1021 թ. իրեն հպատակ ժողովրդի մի մեծ հատուածով փոխադրուեց այնտեղ: Այդ արտագաղթը, այսպէս թէ՛ այնպէս, փաստօրէն ընդ-

հատեց Վասպուրականի հայ մշակույթի զարգացման բնականոն ընթացքը: Պատմական ձախորդ հանգամանքների պատճառով աննրկատ մնաց, հայ մատենագրութեան տեսադաշտից մէկ հարիւրամեակ տեւողութեամբ դուրս թողուեց 10-րդ դարի երկրորդ կէսի եւ 11-րդ դարի սկզբի մեր բանաստեղծութեան խոշորագոյն դէմքը՝ Գրիգոր Նարեկացին, մանաւանդ նրա Ողբերգութեան մատեանը, որ, համաձայն հեղինակային յիշատակարանի տուեալների, գրուել է 1001-1003 թթ.: Նրա անունն առաջին անգամ տալիս է 11-րդ դարի վերջերին եւ 12-րդ դարի առաջին կէսին ապրած Վարդան Հայկազն՝ 1105 թ. վախճանուած Գրիգոր Վկայասէր (Վահրամ Պահլաւունի) կաթողիկոսի յիշատակին նուիրուած «Տաղ գերեզմանական» քերթուածում: Իր հոգեւոր տիրոջը նա նմանեցնում է նրան.

... կամ հոմանունն իւր սքանչելի՝  
Փիլիսոփայն Նարեկեցի . . .<sup>2</sup>

Նարեկացուն հապճեպ կերպով յիշատակում է եւ նոյն ժամանակների տարեգիր Մատթէոս Ուռհայեցին՝ 10-11-րդ դարերի անուանի մատենագիրների ու հոգեւոր գործիչների շարքում, այսպէս «. . . Անանէ եւ Գրիգոր Նարեկացիքն, Սարգիս Սեւանեցին . . . եւ այլք այսպիսիք անյաղթք, որք կային լցեալք աստուածային շնորհօքն . . .»<sup>3</sup>:

Նարեկացու մասին փոքր-ինչ աւելի հանգամանալից վկայութիւն է հանդիպում 12-րդ դարի ժամանակագիր Սամուէլ Անեցու երկում, 984 թ. տակ. «Յաւուրս յայսոսիկ փայլէր իբրեւ զարեզակն իմաստութեամբ եւ առաքինութեամբ սուրբ այրն Աստուծոյ Գրիգոր Նարեկացին, որ ի Հայք, ի գաւառն Վասպուրական, որդի տեսուն Խոսրովու Անձաւացեաց եպիսկոպոսին»<sup>4</sup>: Սակայն այս տեղեկութիւնը բացակայում է Անեցու ժամանակագրութեան՝ 12-րդ դարից մեզ հա-

<sup>1</sup> Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 498-502:

<sup>2</sup> Մաշտոցի անու. մատենադարան, ձեռ. No. 2496, էջ 326ա:

<sup>3</sup> Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 179:

<sup>4</sup> «Սամուէլի քահ. Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1898, էջ 106:

սած ձեռագրերում (Նրեւանի Մաշտոցի անու- մատենադարանի թիւ 5619 եւ 1897 գրչա- գրեր), բուն հեղինակինը չէ, այլ՝ աւելի ուշ ժա- մանակների յաւելում:

Նարեկացու նկատմամբ որոշ լուրջ թեման ու անտարբերութեան ենք հանդիպում նաեւ 16-րդ դարի պատմագրութեան մէջ. նրա անունը չեն տալիս այնպիսի հեղինակութիւններ, ինչ- պիսիք են Վարդան Արեւելցի եւ Ստեփանոս Օրբելեան: Մխիթար Այրիվանեցիի չափազանց հպանցիկ յիշատակութիւն ունի՝ 10-րդ դարի առնչութեամբ. «Աստ Աղուանից պատմագիրն Մովսէս Կաղանկատուացի եւ Նարեկացի եւ Ուխտանէս պատմագիր»<sup>5</sup>: Նարեկացու վերա- բերմամբ համեմատաբար աւելի պերճախօս է Կի- րակոս Գանձակեցի, որ, Ներսէս Շնորհալու- ճի համեմատելով նրա հետ, նկատում է, որ Նարե- կացին եւս գրել է ծայրակապային յորին- ուածքով գանձեր, «որպէս Նարեկացին Գրիգոր զՀոգւոյն գալստեանն եւ զԵկեղեցւոյ եւ զՍուրբ Խաչին, այն որ գրեաց զԳիրս աղօթից յոգնագան բառիւք եւ իմաստասիրական ոճով, եւ գնե- րողեանսն սրբոյն Յակոբայ Մծբնացւոյ եւ զԱռաքելոցն»<sup>6</sup>:

Այս կցկուր յիշատակումները ամենեւին էլ չեն ներկայացնում սպասուելիք այն խանդա- վառ արձագանգը, որ Նարեկացու կեանքն ու գործը իրաւացիորէն պէտք է գտնէին բարձր միջնադարի պատմաժամանակագրական բնոյ- թի մատենագրութեան մէջ: Հակառակ այդ չար- դարացուած սառնութեան, ինչպէս ձեռագրա- կան տուեալներն են վկայում, Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ը եւ միւս ստեղ- ծագործութիւնները հայ գրիչների կողմից 12-15-րդ դարերում բազմիցս ընդօրինակուել են, որի ապացոյցն են ինչպէս 12-րդ, այնպէս էլ, յատկապէս, 13-րդ դարից մեզ հասած եւ կամ չպահպանուած, բայց յետագայ գրչագրերով վկայուած նարեկացիական մի շարք ձեռագրեր<sup>7</sup>:

Գրիգոր Նարեկացու գնահատումը, նրա ստեղծագործութեան առաջին իսկական արժէ-

քաւորումը կատարուեց Մեծ Հայքից դուրս, Կի- լիկեան Հայաստանում, Ներսէս Շնորհալու, Գրիգոր Տղայի եւ Ներսէս Լամբրոնացու միջա- վայրում, 12-րդ դարում եւ յետագայում: Առաջին երկուսը՝ Շնորհալին եւ Գրիգոր Տղան, նկատելիորէն կրում են Նարեկացու գրական ազդեցութիւնը, իսկ Լամբրոնացին, բացի այդ, բանաստեղծի հետ առնչուում է նաեւ նրանով, որ իր Պատարագի մեկնութեան մէջ տեղ է տուել Ողբերգութեան մատեանի ԼԳ գլխի երկու հատ- ուածին եւ իր այդ նշանաւոր երկն աւարտելուց, այն է՝ 1177 թուականից, տարիներ առաջ, մինչ- չեւ 1176 թ. կէսերը, գրիչ եւ մանրանկարիչ Գրիգոր Սկեւոացուն ընդօրինակել է տուել Նա- րեկացու «Մատեան ողբերգութեան»-ը՝ Նրեւա- նի Մաշտոցեան մատենադարանի այժմեան թիւ 1568 ձեռագիրը: Հայ ձեռագրական աշխարհի հրաշալիքներից մէկն է այդ մագաղաթեայ գիր- քը, պահպանուած Նարեկներից ամենահինը, օրինակուած «գրչագիր» կոչուած տառատե- սակով կամ, ինչպէս աւելի յաճախ անուանում են, երկաթագրախառն բոլորգրով: Յիրաւի ամէն ինչով ընտիր մի ձեռագիր՝ թէ՛ տառերի գեղեցիկ ու նուրբ գրութեամբ, որ մատնում է գրիչ եւ մանրանկարիչ Գրիգոր Սկեւոացու շնորհքը, խնամածութիւնն ու զարմանալի համ- բերատարութիւնը, եւ թէ՛ գոյնի ու գծի սքանչե- լի զգացողութեամբ, ոսկու ճաշակաւոր օգտա- գործմամբ նկարուած կիսախորան-անուանա- թերթերով ու, մանաւանդ, Նարեկացու չորս ըն- տիր դիմանկարներով, որոնք եզակի արժէք են ներկայացնում: Այստեղ աւելորդ չենք համա- րում նկատել, որ Նարեկացուց ժամանակով հե- ոու Գրիգոր ծաղկողը իւրովի փորձ է արել գեղանկարչութեան լեզուով թեմատիկ բազ- մագան մեկնաբանութիւն տալ նրա կերպարին՝ չորս մանրանկարներից մէկում պատկերելով Գրիգոր Նարեկացի-փիլիսոփային (էջ 7բ), միւսում՝ Նարեկացի-հսկողին (էջ 55բ), եր- ռորդում՝ Նարեկացի-աղօթաւորին (էջ 120բ), իսկ չորրորդում՝ Նարեկացի-հոգեւորին (էջ 176բ), իւրաքանչիւր նկարի տալով համա- պատասխան մակագրութիւն (վերջին մանրա- նկարի մակագրութիւնն այժմ գուճաթափուել է եւ չի ընթերցւում):

Սակայն Լամբրոնացու պատուէրով սոյն ձեռագիրն այդ առումով չէ, որ մեզ հետաքրք- րում է: Ներկայ դէպքում մեր ուշադրութիւնը գրաւողը մի փոքրիկ բնագիր է, ընդամէնը նրա մէկ թերթը գրաւող ծաւալով (էջ 119ա-բ),

<sup>5</sup> «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանա- կագրական», Մ.-Պետրբուրգ, 1867, էջ 71:  
<sup>6</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Նրե- ւան, 1961, էջ 119-120:  
<sup>7</sup> Նարեկի հնագոյն ձեռագրերն են՝ Մաշտոցի անու. մատենադարանի թիւ 1568 (1176 թ.), 4065 (ժԲ դար), 5989 (ժԲ դար), 3929 (1247 թ.), 4965 (1266-1267 թթ.), 1566 (1283 թ.), 5135 (1286 թ.), 5365 (ժԳ դար) եւ Վասիկանի Առաքելական գրադարանի հայերէն ձեռ. հաւաքածուի թիւ 4 (1226 թ.) գրչագրերը:

որ յաջորդում է Ողբերգութեան մատեանի ԼԳ գլխին, ունի «Վարք սրբոյ առնն Աստուծոյ Գրիգորի Նարեկացոյ» խորագիրը եւ գրուած է բուն ձեռագրից բոլորովին տարբեր գրչու- թեամբ՝ մաքուր բոլորգրով, եւ մէկ այլ ձեռքով: Կասկած է առաջանում. թերեւս այդ թերթը յետագայո՞ւմ է մուծուած ձեռագրի մէջ, այսինքն՝ գուցէ Գրիգոր Սկեւոացու գրչութեան ժամանակակից չէ՞: Բայց կասկածը հեշտու- թեամբ փառասուում է, քանի որ ստուգուած ցոյց է տալիս, որ այն սկզբից եւեթ ձեռագրի համա- պատասխան պրակի մասն է կազմել. միւս կէսի վրայ իր իսկ Գրիգոր Սկեւոացու գրչութիւնն է: Ուրեմն այդ մէկ թերթը վարքը գրելու նը- պատակով Գրիգոր գրիչը ազատ է թողել: Ինք- նաբերաբար հակում եւ այն մտքին, որ այդ թերթը եթէ ոչ ամբողջ ձեռագիրը օրինակողի, ապա նրա ստացողի՝ Ներսէս Լամբրոնացու ձեռքով պէտք է գրուած լինի: Եւ իսկապէս, այդ թերթի գրչութեան համեմատութիւնը Վենետի- կում եւ Հոռոմում Ներսէս Լամբրոնացուց պահ- պանուած ինքնագիր ձեռագրերի այն մի քանի էջերի հետ, որոնց նմանահանութիւնները բեր- ուած են Ղ. Ալիշանի «Հայաստանում»<sup>8</sup> եւ Ն. Ակիմեանի «Ներսէս Լամբրոնացի»<sup>9</sup> մենագրու- թեան մէջ, յանգեցնում է այն հաստատ հետե- ւութեան, որ Մաշտոցեան մատենադարանի յիշալ 1568 թիւը կրող Նարեկի մէկ թերթը՝ յիշալ 119 ա-բ էջերը, ինչպէս նաեւ ձեռագրի սկզբում Ողբերգութեան մատեանի մի քանի գլուխների ու հատուածների համար կազմուած «Բանք նշանաւորը, որ ի գիրս յայս» խորագրով հա- մաօտ ցանկը (էջ 4բ) գրուած են այդ ձեռագրի մեծանուն ստացողի՝ Ներսէս Լամբրոնացու ձեռքով: Այսպէս, Նրեւանի Մաշտոցեան մատե- նադարանը եւս ունի 12-րդ դարի երկրորդ կէսի այդ ակնաւոր աստուածաբան-մեկնիչի, ճիշտ այդ փոքր, բայց թանկարժէք ինքնագիրը, որ բա- է փոքր, բայց թանկարժէք ինքնագիրը, որ բա- է փոքրիկ նշանակութիւն է ձեռք բերում, քանի որ ցառիկ նշանակութիւն մշակոյթի մեծերից մէկի խօսքն է իր մեծ նախորդի մասին:

Լամբրոնացուն պատկանած խնդրոյ առար- կայ Նարեկը, իբրեւ ընտիր եւ վստահելի ձեռա- գիր, յետագայում այլ գրիչների համար դարձել

<sup>8</sup> Ղ. Ալիշան, Հայաստանում, Բ. Պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 426 եւ 425:  
<sup>9</sup> Ն. Ակիմեան, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 78 եւ 83:

է գաղափար օրինակ: Եւ այդ ճանապարհով, Ողբերգութեան մատեանի հետ միասին, երբեմն՝ նրա ԼԳ գլխից յետոյ եւ աւելի յաճախ՝ նրա վերջում, բազմիցս ընդօրինակուել է նաեւ Լամբրոնացու գրած վարքը: Վարքը, ընդար- ձակուելով ու վերախմբագրուելով, տեղ է գտել նաեւ Յայսմաւուրը ժողովածուներում, քանի որ Նարեկացին համարուել է հայոց ազգային եկեղեցու սուրբ, նրա անունը մտել է սոսնցոյցի մէջ, եւ նրա յիշատակի կատարումը հայ եկեղե- ցու համար պարտադիր է դիտուել: Վարքի նախնական, անփոփոխ օրինակը, 18-րդ դարից սկսած, ունեցել է տաս հրատարակութիւն՝ առանց հեղինակի անուան նշման<sup>10</sup>:

Այստեղ մեզ, սակայն, հետաքրքրում է մի կարեւոր հարց. ո՞վ է Լամբրոնացու ձեռքով գրուած վարքի հեղինակը՝ ի՞նքը, թէ՞ մէկ ուրիշը: Նշենք, որ այդ փոքրիկ բնագրի հեղի- նակային պատկանելութեան հարցը ի մաս- նաւորի զբաղեցրել է յատկապէս Վիեննայի Մխիթարեան վաստակաշատ հայրեր՝ Ներսէս Ակիմեանին եւ Համազասպ Ոսկեանին:

Ոսկեան հրատարակել է վարքի երկու խմբ- բագրութիւն, մէկը՝ 1685 թ. օրինակուած մի Նարեկի գրչագրից, իսկ միւսը՝ դարձեալ ուշ շրջանի մի Յայսմաւուրից: Բայց այդ երկու խմբագրութիւններն էլ Լամբրոնացու գրած վարքի նախօրինակ պատկերը չեն ներկայացը- նում: Ոսկեանի ծանօթ չեն եղել ո՛չ Մաշտոցեան մատենադարանի լամբրոնացիական ձեռագիրը եւ ո՛չ էլ նրա ընդօրինակութիւններից որեւէ մէ- կը: Չունենալով մի այդպիսի անայլայլ օրի- նակ, սակայն, բարեբախտաբար, իր ձեռքի տակ ունենալով վարքի խորագրում միջնադարեան գրչի նշումը, թէ՛ «. . . արարեալ է սուրբ արքե- պիսկոպոսին տեառն Ներսէսի՝ առաջնորդի սուրբ ուխտիս Սկեւոայի», — Ոսկեան հրատա- րակած առաջին խմբագրութիւնն ընծայում է Լամբրոնացուն, թէեւ, ինչպէս նշեցինք, այն Լամբրոնացու գրածի իսկատիպ պատկերը չի տալիս. հեռացած է նրանից եւ՛ իր ծաւալով, եւ՛ իր բովանդակութեամբ, ունի նաեւ յաւելում- ներ: Ոսկեան իր վերագրումը հիմնաւորելու հա- մար բերում է որոշ կուռաններ՝ արտաքին եւ

<sup>10</sup> Բացառութիւն է կազմում Հ. Ոսկեանի հրատարակու- թիւնը, որ խորագրուած է Ներսէսի Լամբրոնացոյ Վարք Գրիգորի Նարեկացոյ» (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1940, էջ 214-220), սակայն անուանի բանասէր ներկայացրել է ոչ թէ բուն Լամբրոնացու հեղինակած վարքը, այլ նրա յետագայ մէկ խմբագրութիւնը:

ներքին ապացույցներ, որոնցից մասնավորապես մէկը կարելի էր ենթադրել մէջբերել: «Բայց բարեբաստօրէն Ներսէս Լամբրոնացի ունի ինքնայատուկ նախասիրութիւն մը, — գրում է Ոսկեան, — որ զինքը երեւան կը հանէ: Գիտենք, թէ ինչպէս անիկա յետ գաղափարներու արձակ եւ յորձանուտ հեղեղատի մը, զիտէ յանկարծ զանոնք կապել ու սահմաններու մէջ ամփոփել, նոյնը եւ հոս կը տեսնուի . . .»<sup>11</sup>: Ապա վարքից բերում է իր միտքն ապացուցող չորս յանգաւոր տողեր.

Ձայտսիկ թողեալ յեկեղեցի Բրիստոսի,  
Անջինջ յիշատակ յետ իւր կենդանի,  
Ընձայր տեսանել զլոյսն անճառելի,  
Եւ ուրախանալ (խանդակաթ) սիրովն  
Յիսուսի<sup>12</sup>:

Նկատենք, որ այս տողերը Ոսկեանի հրատարակած վարքի օրինակում իրար շարունակութիւն չեն կազմում, բերուած են երկու տարբեր տեղերից, ընդ որում երրորդ տողից առաջ բաց են թողուած բնագրի «որ միշտ փափագմամբ» բառերը, որոնք այդ տողի հետ կազմում են մէկ շարահիւսական միաւոր, մէկ ստորադաս նախադասութիւն. Ոսկեան դրանք բաց է թողել եւ բնագրի երկու տարբեր տեղերից քաղուած տողերը իբրեւ իրար շարունակութիւն ներկայացրել, որպէսզի չափածոյ ուղիւմ զգալի դառնայ, եւ դրանով իսկ իր բերած օրինակը նպատակամէտ լինի: Ասենք, որ վարքի շարադրանքում տեղ-տեղ իսկապէս ակնյայտ է չափածոյ խօսքին յատուկ կանոնաւոր ուղիւմ, բայց Ոսկեանի քաղուածքը, այդուհանդերձ, բռնազբօսիկ է:

Աւելացնենք նաեւ, որ վարքի բուն Լամբրոնացիական օրինակում եւ նրան հարազատ ընդօրինակութիւններում Ոսկեանի մէջբերած տողերից նոյնութեամբ կայ միայն առաջինը, երկրորդ տողն առկայ է կիսով, այն էլ տարբեր շարադասութեամբ («կենդանի յետ իւր յիշատակ» փոխանակ «անջինջ յիշատակ յետ իւր կենդանի»), իսկ մնացած երրորդ-չորրորդ տողերն առհասարակ չկան. դրանք Լամբրոնացու բնագրի յետագայ վերախմբագրողի յաւելումն են: Մնում է ասել, որ Ոսկեանի աշխատանքի արժէքն այն է, որ նրանում բանասիրօրէն առաջ է քաշուած Ներսէս Լամբրոնացու, որպէս Գրիգոր Նարեկացու վարքի հեղինակի, հարցը:

<sup>11</sup> Տե՛ս «Հանդէս ամօրեայ», 1940, էջ 215:  
<sup>12</sup> Նոյն տեղում:

Այլ է Հայր Ներսէս Ակիմեանի տեսակէտը, որ ի մօտոյ ծանօթ է եղել Մաշտոցեան մատենադարանի՝ արդէն քանիցս յիշուած թիւ 1568 ձեռագրին, բայց, Գարեգին Յովսէփեանի պէս, չի նկատել, որ այդտեղ Նարեկացու վարքի օրինակը Ներսէս Լամբրոնացու ինքնագիրն է: Նա Լամբրոնացուն համարում է այդ վարքի միայն խմբագիրը, որ իր ձեռքի տակ, իբր, ունեցել է վարքի աւելի նախնական մի բնագիր, նոյնական այն խմբագրութեան, որ Գ. Յովսէփեան իր «Յիշատակարանք ձեռագրաց»-ում հրատարակել է Մաշտոցեան մատենադարանի թիւ 1566 ձեռագրից (14-րդ դարի ձեռագիր)<sup>13</sup>: Ըստ Ակիմեանի, Տարսոնի տէր Օշին սեւաստոսի որդի Ներսէս Լամբրոնացի քահանայի աշխատանքը սահմանափակուել է հետեւեալով. «Ոմբագրին սեպհականն է սկզբնաւորութիւնն եւ մաղթողական վերջաւորութիւնը: Այս վերջաւորութիւնը առանց տարակուսի ստացողէն է, որ է Ներսէս քահանայ»<sup>14</sup>:

Այդպէս, փաստօրէն Լամբրոնացուն յատկացուած են վարքի վերջուածքի սոյն տողերը միայն. «Ձմաղթանս սորա, զոր արծարծեալ ի հուր սրտիս խնգեմ քեզ, Բրիստոս, ընգալ բարեխօսութեամբ սուրբ հաւրս հաշտութեամբ. եւ քեզ փա՛ռք յաւիտեանս, ամէն»<sup>15</sup>:

Բայց ո՞րն է նախնականը՝ Լամբրոնացիական օրինակը, թէ՞ ոչ-Լամբրոնացիական խմբագրութիւնը: Լամբրոնացու ինքնագիր օրինակում եւ նրա նոյնական ընդօրինակութիւններում վարքի պատումի ընթացքը կուռ է ու տրամաբանական, ամէն ինչ տրուած է իմաստաւոր յաջորդականութեամբ եւ ներքին կապակցուածութեամբ, լեզուաոճական միասնութեամբ, առանց աւելորդութիւնների: Նոյն յատկանիշներն այդ չափով բնութագրական չեն ոչ-Լամբրոնացիական խմբագրութեանը, որի առանձին հատուածներին յատուկ է ոճի ճապաղութիւնը եւ որոշ դարձուածքների անհարկի կրկնութիւնը: Վերջինիս մէջ Նարեկացու ուսուցչի՝ Անանիա Նարեկացու անունից առաջ լրացուած-աւելացուած է բանաստեղծի հօր Պոսրով Անձեւացու անունը: Բայց ստացուել է

<sup>13</sup> Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 141-144:  
<sup>14</sup> Ն. Ակիմեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 183-184:  
<sup>15</sup> Երեւանի Մաշտոցի անու. մատենադարան, ձեռ. No. 1568, էջ 119բ:

այսպիսի անճաշակ կրկնութիւն. որչի տեսուն Պոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի, որչի դաստը եղբօր հօր Անանիայի»<sup>16</sup>: Եթէ Լամբրոնացին իր ինքնագիրը վերակազմեր այդ խմբագրութիւնից, հազիւ թէ անտեսուէր Նարեկացու հօր անունը, այն դէպքում, երբ վարքի հերոսի հօր անունն յիշատակումը վարքագրական ժանրի ստեղծագործութիւնների համար առհասարակ պարտադիր կէտ է համարուել: Ենթադրել կարելի է, որ վարքը գրելիս Լամբրոնացին, թերեւս, այդ տուեալն իր ձեռքի տակ չի ունեցել: Բայց այդ մասին քիչ յետոյ:

Այնուհետեւ: Նարեկացու վարքի թէ՛ Լամբրոնացիական եւ թէ՛ ոչ-Լամբրոնացիական օրինակները մեզ են հասել չորսուկէս տասնեակից աւելի ձեռագրերով, «Մատեան ողբերգութեանն» առընթեր: Ու մինչդեռ Լամբրոնացիական օրինակը հանդիպում է եւ՝ Կիլիկիայում, եւ՝ բուն Հայաստանում, եւ՝ հայկական գաղթօջախներում օրինակուած գրչագրերում, ոչ-Լամբրոնացիական խմբագրութիւնը, ընդհակառակն, չի երեւում գէթ մի ձեռագրում, որ գրուած լինէր Կիլիկիայում կամ Լիւբի ու, նոյնիսկ, Լեհաստանի հայկական գրչօջախներում, որոնք, ինչպէս յայտնի է, շարունակել են կիլիկեան ձեռագրական աւանդոյթները: Հետեւապէս, եթէ վարքի ոչ-Լամբրոնացիական խմբագրութիւնն ստեղծուած լինէր Լամբրոնացիական խմբագրութիւնից աւելի վաղ, եւ Կիլիկիայի Սկեւոյ անապատում նրանից օգտուած լինէր Ներսէս Լամբրոնացին, ապա նրա գոնէ մէկ օրինակը պէտք է որ պահպանուէր Կիլիկիայի տարածքում գրչագրուած որեւէ ձեռագրում: Այս հանգամանքը շատ կարեւոր է եւ ինքնին յուշում է, որ նախ ստեղծուել է վարքի Լամբրոնացու օրինակը՝ ամենաուշը 1173 թ., ապա՝ բաւական յետոյ, արդէն 13-րդ դարում, բուն Հայաստանում նրա հիման վրայ առաջացել է ոչ-Լամբրոնացիական խմբագրութիւնը: Վերջինիս պահպանուած հնագոյն օրինակը 1286 թ. Վայոց ձորի Թանահատի վանքում գրուած ձեռագիրն է<sup>17</sup>: Մնում է ընդունել, որ Գրիգոր Նարեկացու վարքի նախօրինակը Ներսէս Լամբրոնացու ինքնագիրն է: Քանի որ այն սէս Լամբրոնացու ինքնագիրն է, յետագայ գրիչները նրա խորագրում անհրաժեշտ են համարել յիշելու ու հաւաստել, թէ «արարեալ է սուրբ շեցնել ու հաւաստել, թէ «արարեալ է սուրբ

արքեպիսկոպոսին տեսուն Ներսէսի՝ առաջնորդի սուրբ ուխտին Սկեւոյի»<sup>18</sup>:

Այսպէս, ձեռագիր Նարեկներում մեզ հանդիպում է Նարեկացու վարքի երկու խմբագրութիւն, մէկը՝ Լամբրոնացու (Ա խմբագրութիւն), միւսը՝ նրա հիման վրայ պատմական Հայաստանի (աւելի հաւանական է՝ Արեւելեան Հայաստանի) ինչ-որ գրչօջախում անանուն ստեղծուածը (Բ խմբագրութիւն): Ողբերգութեան մատեանի ձեռագրերից մէկում հանդիպում է եւ վարքի մի խառն օրինակ (Երեւանի Մաշտոցեան մատենադարանի թիւ 5364 ձեռագիր): Նրա գրիչը՝ Ստեփանոս, 1363 թ. Երզնկայի Յակոբայ վանքում աւարտելով Նարեկի ընդօրինակումը, նրա վերջում (էջ 372ա-374ա) աւելացրել է Նարեկացու վարքը: Այդ օրինակը սկիզբի մասով՝ շուրջ 5-6 տող ծաւալով, մինչեւ «Եւ էր սա որդի» բառերը ներառեալ, վերցուած է Լամբրոնացու խմբագրութիւնից, շարունակութեամբ նոյնանում է Բ խմբագրութեան հետ:

Ինչպէս վերեւում նշուեց, վարքի երկու խմբագրութիւնն էլ վաղուց հրատարակուել են<sup>19</sup>, տեղ են գտել նաեւ «Մատեան ողբերգութեան» երկի՝ վերջերս լոյս տեսած քննական բնագրի առաջաբանում<sup>20</sup>, եւ ընթերցողը հնարաւորութիւն ունի ծանօթանալու այդ բնագրերին: Նրանց ընդհանուր արժէքի մասին անհրաժեշտ ենք գտնում ասել, որ Լամբրոնացու հեղինակած վարքը Գրիգոր Նարեկացու բնութագրիչ դիմանկարն է, աւելի գնահատանքի խօսք նրա մասին, քան սովորական կենսագրութիւն: Ըստ երեւոյթին այդպէս էլ այն ընկալուել է ժամանակակիցների կողմից: Եւ կարծես այդ է ակնարկում Սամուէլ Սկեւոյցի գրիչը 1190 թ.: Ընդօրինակելով Ներսէս Լամբրոնացու «Մեկնութիւն սաղմոսաց» աշխատութիւնը՝ ձեռագրի վերջում նա թողել է կենդանի Լամբրոնացու կեանքի ստոյգ ու բաւական մանրակրկիտ պատմութիւնը, ուր ցաւով աւելացրել է. «. . . փոքր ինչ թողի ձեզ զպատմութիւն կենաց

<sup>16</sup> Նոյն տեղում, ձեռ. No. No. 7365 (էջ 61բ), 5650 (էջ 323բ), 5087 (էջ 282ա) եւ այլն:  
<sup>17</sup> Այն հրատարակուել է «Մատեան ողբերգութեան» երկի՝ Պոլսի 1700-1702, 1726, 1736-1737, 1755, 1763, 1782, 1789, Երուսաղէմի 1868 եւ Երեւանի 1985 թթ. տպագրւելու, նաեւ՝ Գարեգին Ա կաթողիկոս (Յովսէփեան), Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 143-146:  
<sup>20</sup> Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, 1985, էջ 170 եւ 172-174:

<sup>18</sup> Նոյն տեղում, ձեռ. No. 5707, էջ 111բ:  
<sup>17</sup> Մաշտոցի անու. մատենադարան, ձեռ. No. 5135:

սորին (իմա՝ Լամբրոնացու) ընթացից, զի մի՛ մնացեց տարակոյս յառաջել ժամանակին սորին քննողի ո՛վն եւ ո՛ւտն եւ զիա՛րդն, որպէս եւ մէք այսաւր ունիմք զբազում հարց մերոց եւ վարդապետաց Հայոց, այսինքն՝ զԴաւիթ Ներգինեցի եւ զԳրիգոր Նարեկացի եւ զՄովսէս Խորենացի եւ զայլս, որոց ի բանիցն պարարտութեանէ զուարճանամք եւ զիա՛րդ կենաց եւ վարուց փափագելով զիտել՝ ոչ ունիմք եւ ոչ մի բան վասն երանելեացն պատմութիւն»<sup>21</sup>։ Սա գրում է մի մարդ, որ գործել է Սկեւոյում՝ Ներսէս Լամբրոնացու առաջնորդութեամբ եւ, անշուշտ, ո՛չ մի անգամ, այլ բազմիցս իր ձեռքն է առել ու կարդացել «Մատեան ողբերգութեան» երկի այն գրչագիրը, ուր գտնուում է Նարեկացու վարքի Լամբրոնացու ինքնագիրը, այն է՝ Մաշտոցեան մատենադարանի այժմեան թիւ 1568 ձեռագիրը։

Վարքի տեղեկութիւնները Նարեկացու կեանքի մասին չափազանց աղքատիկ են եւ քաղուած են, մանաւանդ, Ապարանից Ս. Պաշի պատմութեան հեղինակային յիշատակարանից։ Ըստ այդ յիշատակարանի, Լամբրոնացին գիտէ, որ Գրիգորն Անանիա Նարեկացու հետ ազգակցական կապ ունի, որ նրա եղբոր անունը Յովհաննէս է, բայց սխալմամբ կարծում է, թէ «Մատեան ողբերգութեան»-ը գրելու ժամանակ Յովհաննէս մեռած է եղել։ Դա ցոյց է տալիս, որ Լամբրոնացին անտեսել է Նարեկի յիշատակարանը, որտեղ Գրիգոր, հիացմունքով խօսելով եղբոր մտաւոր բարձր կարողութիւնների մասին, միաժամանակ նշում է, որ ինքը «Մատեան ողբերգութեան»-ը գրել է եղբոր գործակցութեամբ։ Լամբրոնացին յիշատակում է Նարեկացու գրեթէ բոլոր կարեւոր երկերը, բացի տաղերից ու մեղեդիներից։ Յիշատակում է նաեւ Նրգերգոցի մեկնութիւնը, բայց հաւանաբար ծանօթ չի եղել այդ երկին Նարեկացու կցած յիշատակարանին, որտեղ մեկնիչ-բանաստեղծը տալիս է հօր՝ Անձեւացեաց խորով եպիսկոպոսի անունը։ Կարելի է մտածել, որ Լամբրոնացին կա՛մ չի իմացել Նարեկացու հօր անունը, կա՛մ, իմանալով հանդերձ, հրաժարուել է յիշատակելուց։ Նրեւի պատշաճ չի համարել նշել, որ Նարեկացին նրա որդին է եղել. չէ՞ որ խորով Անձեւացին, թէկուզ եւ աւելի քան երկու դար առաջ,

իբրեւ հերձուածող, բանադրուած է եղել հայոց Անանիա Մոկացի կաթողիկոսից (941-965 թթ.) եւ բանադրուած էլ մահացել է<sup>22</sup>։

Վարքում կայ ժամանակագրական անհամապատասխանութեան մի դէպք. 960-ական թթ. երկրորդ կէսին կաթողիկոս եղած Վահան Սիւնեցուն Լամբրոնացի թիւրիմացաբար յիշատակում է բիւզանդական Վասիլ ու Կոստանդին կայսրերի եւ Արծրունեաց Սենեքերիմ թագաւորի (1003-1021 թթ.) հետ, հայոց ՆԲ (983) թուականի տակ, որպէս ժամանակակիցներ։ Այդ շփոթութիւնը գալիս է Մատթէոս Ուռհայեցու ժամանակագրութիւնից<sup>23</sup>, որին եւ այդ դէպքում Լամբրոնացին հետեւել է։

Վարքի Ա խմբագրութեան հետ Բ խմբագրութեան համեմատութիւնը ցոյց է տալիս, որ վերջինում փոփոխութիւններն ու ընդարձակումը կատարուել են ոչ թէ վարքը Նարեկացու կեանքի մասին նոր տուեալներով հարստացնելու, այլ ոճական-հետադարձական բնոյթի ընդհանուր բնութագրումների միջոցով։ Փաստօրէն Բ խմբագրութեան մէջ աւելացել է միայն մէկ ստոյգ տեղեկութիւն. որ Նարեկացին Անձեւացեաց խորով եպիսկոպոսի որդին է։

Ինչպէս նշուեց, Յայսմաւուրք ժողովածուներում եւս տեղ է գտել Նարեկացու վարքը։ Նրա յիշատակի տօնը կատարուել է սահմի Ե - հոկտեմբերի 14-ին (ըստ Կիրակոս Արեւելցու Յայսմաւուրքի<sup>24</sup>) եւ կամ յատկապէս մեհեկի ԻԱ - փետրուարի 27-ին (ըստ Գրիգոր Անաւարդեցու եւ Գրիգոր Մերենց Ուլաթեցու ժողովածուների)։ Վարքի յայսմաւուրքային տարբերակներից յայտնի են միայն երկուսը, որոնցից մէկը մտել է Տէր-Իսրայէլի անունով հրատարակուած Յայսմաւուրքի մէջ<sup>25</sup>, իսկ միւսը՝ Գրիգոր Ուլաթեցու Յայսմաւուրքը։ Վերջինը վարքի խմբ-

<sup>22</sup> Հմմտ. Գ. Տէր-Մկրտչեան, Անանիա Մոկացի (յաւելուած -Արարատ» ամսագրի, Վաղարշապատ, 1897, էջ 91-96)։  
<sup>23</sup> Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1893, էջ 34։  
<sup>24</sup> Տե՛ս Մաշտոցի անու. մատենադարան, ձեռ. No. 7433, էջ 74բ, որտեղ գրուած է. «Յայսմ աւուր տաւն է հանգստեան Գրիգորի Նարեկացոյն»։  
<sup>25</sup> Տե՛ս «Յայսմաւուրք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց Տէր Իսրայէլի», Կ. Պոլիս, 1834, էջ 99։ Ըստ ուսումնասիրողների այս հրատարակութիւնը պատրաստողը՝ Գրիգոր Փնշտիմալճեան, տպագրելով Անաւարդեցու Յայսմաւուրքը, շփոթութեամբ վերագրել է Տէր-Իսրայէլի։

<sup>21</sup> Տե՛ս Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, էջ 549։

բազրութիւններից ամէնէն ընդարձակն է եւ տարածուածը, երեւան է եկել 1401 թուականից ոչ վաղ եւ հրատարակուել Ուլաթեցու Յայսմաւուրքի կազմում (Կ. Պոլիս, 1701 եւ 1733 թթ.)։

Որպէս եզրակացութիւն, աւելացնենք, որ Նարեկացու վարքի յետագայ բոլոր խմբագրութիւններում, իբրեւ հիմնանիւթ, պահպանուել են նախօրինակի՝ Լամբրոնացու հեղինակած փոքրիկ երկի սիւժետային գիծն ու բովանդակութիւնը՝ ամէն անգամ լրացուած նոր կէտերով ու երանգներով։

Վարքի արժէքը անուրանալի է, քանի որ այն

միջնադարեան միակ բնագիրն է, որ ի մի է բերում տեղեկութիւններ մեր հանճարեղ բանաստեղծի մասին՝ կապակցելով եւ դրանց տալով կենսագրութեան կերպարանք, հետեւապէս եւ ոչ պերճախօս, բայց վստահելի աղբիւր է Նարեկացու գիտական կենսագրութեան ստեղծման համար։

ՊՕՂՈՍ Մ. ԽԱԶԱՏՐԵԱՆ

Երեւանի պետական համալսարանի  
 հայ գրականութեան ամբիոնի դոցենտ,  
 բանասիրական գիտութիւնների թեկնածու